



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

<< 18 >> հոկտեմբեր 2016թ.

N 158

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 80 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունիսի 14-ի N 64-Ն հրամանը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի հունիսի 1-ի «Սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդներ ձևավորելու, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների աշխատակարգը սահմանելու մասին» N 80 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.
 - 1) որոշման N1 հավելվածը լրացնել «Վարդան Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, Գայանե Ազոյան - «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպություն» բառերով.
 - 2) որոշման N2 հավելվածը լրացնել «Հովհաննես Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, Վարդան Միրզախանյան - «Էկո 99» քնապահպանական հասարակական կազմակերպություն» բառերով.
 - 3) որոշման N3 հավելվածը լրացնել «Յողիկ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, Մարինա Բարեյան - <<Հայաստանի մանուկներ հիմնադրամ>> հասարակական կազմակերպություն>> քառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մ Ա Ր Զ Պ Ե Տ՝



Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ